



COVID-19-ի Կանխարգելումը Վաղ Խնամքի և Կրթության Ծրագրերում Տեղեկություններ Ծնողների և Խնամակալների Համար

Վաղ խնամքի և կրթության (ECE) ծրագրերին, ներառյալ երեխայի խնամքի կենտրոններին, երեխայի խնամքի ընտանեկան տներին և նախակրթարաններին, թույլատրվում է գործել՝ հետևելով [երեխաներին Վաղ Կրթությունը Տրամադրողների Ուղեցույցին](#): Այս ուղեցույցը թվարկում է կանոններ և հորդորներ, որոնք ապահովում են պաշտպանության շերտեր՝ օգնելու կանխել COVID-19-ի տարածումը: ECE-ի մատակարարները սերտորեն համագործակցում են Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության հետ՝ ստեղծելու երեխաների և անձնակազմի անվտանգությանը նպաստող միջավայրեր:

Դուք կարող եք օգնել՝ իմանալով COVID-19-ի անվտանգության կանոնների և հորդորների մասին, և եթե ձեր երեխան բավական հասուն է հասկանալու համար, բացատրեք, թե ինչ կարող է նա ակնկալել:

Բոլորի անվտանգության համար վաղ խնամքի և կրթության (ECE) ծրագրերը պահանջում են.

Բոլորը պետք է կրեն դիմակ փակ տարածքում գտնվելիս.

- 2 տարեկանից (24 ամսական) մեծ բոլոր երեխաներից, անձնակազմի անդամներից և այցելուներից պահանջվում է կրել դիմակ:
 - Դիմակները պետք է հանել քնի ժամին կամ երբ երեխաները ուտում կամ խմում են:
 - 2-ից 8 տարեկան երեխաները դիմակ կրելիս պետք է լինեն մեծահասակների հսկողության ներքո:
 - Որոշ մարդիկ չպետք է դիմակ կրեն: 2 տարեկանից (24 ամիս) փոքր երեխաները չպետք է դիմակ կրեն: Առողջական կամ հոգեկան առողջության որոշակի խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է դիմակ կրեն, եթե այդպես կարգադրել է իրենց բժիշկը: Առողջական կամ հոգեկան առողջության որոշակի խնդիրների կամ հաշմանդամության կամ լսողության խանգարման հետևանքով ECE ծրագրերում դիմակ կրելուց ազատվելը պետք է իրականացվի լիցենզավորված բժշկի կամ բժշկի լիցենզիայով աշխատող այլ բժշկական մասնագետի կողմից: Ինքնազնահատումը կամ ծնողի կողմից հաստատումը դիմակներից ազատվելու համար չեն թույլատրվում: Բժշկական դիմակներից ազատված անձինք պետք է կրեն ստորին հատվածում ամրացված կտորով դեմքի վահան՝ պարանոցի հատվածը ծածկելու համար, եթե նրանց առողջական վիճակը դա թույլ է տալիս:
- Դիմակ կրելու վերաբերյալ ավելին իմանալու համար այցելեք՝ ph.lacounty.gov/masks:

Երեխաները չպետք հաճախեն, եթե հիվանդ են կամ գտնվում են մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:

- Այն երեխաներին, որոնք ունեն ջերմություն կամ հիվանդության այլ նշաններ, չպետք է ուղարկել Վաղ Խնամքի և Կրթության հաստատություն (ECE): COVID-19-ի ախտանիշների համար տե՛ս ph.lacounty.gov/covidcare:
- ECE հաստատություն ժամանելիս կարող են ստուգվել երեխաների ախտանիշները, և նրանք կարող են ջերմաչափվել: Երեխաներին չի թույլատրվի մուտք գործել, եթե նրանց մոտ դրսևորվեն հիվանդության նշաններ: Եթե օրվա ընթացքում երեխայի մոտ դրսևորվեն ախտանիշներ, ապա երեխան կմեկուսացվի մյուսներից և կուղարկվի տուն: Խնդրում ենք ձեր ECE մատակարարին տրամադրել ձեր ընթացիկ հեռախոսահամարը՝ ձեր երեխայի հիվանդանու դեպքում օգտագործելու համար:



COVID-19-ի Կանխարգելումը Վաղ Խնամքի և Կրթության (ECE) Ծրագրերում

- Ծրագրեք նախօրոք: Տեղում ունեցեք երեխայի շտապ խնամքի ծրագիր, որպեսզի ձեր երեխայի հիվանդանալու դեպքում նա կարողանա ապահով մնալ տանը:

Վաղ խնամքի և կրթության (ECE) ծրագրերը կարող են պահանջել անվտանգության լրացուցիչ քայլերի իրականացում

Հետևյալ քայլերը նվազեցնում են COVID-19-ի վտանգը ֆիզիկական հեռավորության պահպանման, կուտակումների նվազեցման և օդափոխության ավելացման միջոցով: Բոլորը պետք է հետևեն ECE ծրագրի կողմի սահմանված կանոններին: Դիմեք ձեր երեխայի ECE մատակարարին՝ իմանալու ավելին անվտանգության գործող քայլերի մասին:

Վաղ խնամքի և կրթության (ECE) ծրագրերը կարող են որոշել՝

- Ստեղծել երեխաների և անձնակազմի անդամների **հատուկ սահմանված խմբեր**, որոնք մտնում են միասին ամբողջ օրվա ընթացքում հիմնական զբաղմունքների ժամանակ՝ ներառյալ ուսուցում և քնելու ժամերին:
- **Բացել դռներն ու պատուհանները** օդի հոսքը մեծացնելու համար:
- **Մնվել և բացօթյա տարածքում անցկացնել զբաղմունքները**, հատկապես այն գործողությունները, որոնք պարունակում են COVID-19-ի տարածման ավելի մեծ վտանգ: Սա ներառում է ընդմիջումները և ֆիզիկական վարժանքները, պարերը, արտասանել-վանկարկերը և երգերը:
- **Ստեղծել ավելի շատ տարածություն դասարաններում և քնի վայրերում:**

Ինչպես կարող եք աջակցել անվտանգության ապահովմանը ձեր երեխայի վաղ խնամքի և կրթության (ECE) ծրագրում

Եթե ձեր երեխան բավարար հասուն է հասկանալու համար, ապա ասեք նրան, թե ինչ կարող է ակնկալել ECE ծրագրերում: Սա ներառում է նաև բացատրելը, որ նա պետք է՝

- **Կրի դիմակ բացօթյա մարդաշատ վայրերում:**
 - Սա ներառում է մուտքի, ելքի հերթում սպասելիս կամ ընդմիջման կամ ճաշի ժամերին դիմակ կրելը, երբ չեն ուտում կամ խմում:
 - Հավաստիացեք, որ նրանք պատշաճ կերպով են կրում իրենց դիմակը (ստորև տե՛ս՝ Խորհուրդներ Դիմակ Կրելու Վերաբերյալ):
- **Հետևի այն կանոններին, որոք վերաբերում են որոշելուն, թե երեխաների ինչպիսի խմբերի և անձնակազմի որ անդամների հետ է նա ժամանակ անցկացնում:**
 - Երեխաների և անձնակազմի հատուկ խմբեր սահմանելուն զուգահեռ, ծրագրերը կարող են երեխաներից պահանջել նստել կամ կանգնել ավելի հեռու: Նրանք կարող են նաև սահմանել նստատեղեր հատկապես այնպիսի գործողությունների ժամանակ, ինչպիսիք են ուտելն ու խմելը, երբ դիմակներ չեն կրում:
- **Պահպանի հեռավորություն մյուսներից:**
 - Չրուցեք ձեր երեխայի հետ մարդկանց կուտակումներից խուսափելու մասին: Հնարավորության դեպքում դասասենյակից դուրս գտնվելիս նա պետք է փորձի առնվազն 6 ոտնաչափ հեռու մնալ մյուսներից: Ցույց տվեք ձեր երեխային, թե որքան է կազմում 6 ոտնաչափ հեռավորությունը:
 - Յուրաքանչյուր անգամ ուրիշների շրջապատում գտնվելիս և երբ դիմակ չի կրում (օրինակ՝ ճաշերի ժամերին), նա պետք է հեռավորություն պահպանի մյուսներից:
- **Պահպանի ձեռքերի լավ հիգիենա:**
 - Բոլորը պետք է հաճախակի լվանան իրենց ձեռքերը հատկապես զուգարանից օգտվելուց հետո, ուսուցումից առաջ և քիթը մաքրելուց, հազալուց կամ փռշտալուց հետո:

COVID-19-ի Կանխարգելումը Վաղ Խնամքի և Կրթության (ECE) Ծրագրերում

- Երեխաներին սովորեցրեք, թե ինչպես լվանալ ձեռքերը օճառով և ջրով և ինչպես ճիշտ օգտագործել ձեռքի ախտահանիչը:
 - Ծանոթություն: Փոքր երեխաները պետք է սպիրտային հիմքով ախտահանիչ միջոցը օգտագործեն միայն մեծահասակների հսկողությամբ: Սա անհրաժեշտ է՝ համոզվելու, որ նրանք չեն ուտում և ձեռքերը չեն դնում իրենց բերանի մեջ, մինչև ախտահանիչի չորանալը:
- Հիշեցրեք նրանց խուսափել ոչ մաքուր ձեռքերով ուտելուց և իրենց դեմքին դիպելուց:

Խորհուրդներ երեխաների դիմակներ կրելու վերաբերյալ

- Առավել պաշտպանիչ դիմակն այն դիմակն է, որը կծածկի ձեր երեխայի քիթը և բերանը և նրան մշտապես հարմար կլինի կրել փակ տարածքներում գտնվելիս: Դիմակը պետք է ամուր ծածկի քիթը և կզակը՝ չթողնելով բացեր դեմքի երկու կողմերում: Այն պետք է պատրաստված լինի սերտորեն հյուսված առնվազն երկշերտ, շնչելուն հարմար նյութից:
- Կան դիմակների որոշ տեսակներ, որոնք ապահովում են ավելի բարձր մակարդակի պաշտպանություն: Իմացեք ավելին ph.lacounty.gov/masks կայքէջում: Նկատի ունեցեք՝ որքան բարձր է դիմակի պաշտպանության մակարդակը, այնքան ավելի դժվար կլինի ձեր երեխայի համար հարմարավետ կրել այդ դիմակն ամբողջ օրվա ընթացքում:
- Լավ կլինի, որ ձեր երեխան տանը փորձի կրել տարբեր դիմակներ՝ հավաստիանալու, որ կարող է հարմարավետ շնչել և կրել այդ դիմակը ECE ծրագրում գտնվելու ամբողջ օրվա ընթացքում: Թող նա կրի դիմակը մի քանի ժամ տանը փակ տարածքում գտնվելիս:
- Ձեր երեխայի հետ ուղարկեք լրացուցիչ դիմակներ, որպեսզի նրանք կարողանան փոխել դիմակը, եթե այն շատ կեղտոտվի կամ թրջվի:

Լրացուցիչ խորհուրդների համար տե՛ս [Ապահով Լինելը և Վիրուսի Տարածման Կանխարգելումը](#) [Չպատվաստված Երեխաներ Ունեցող Ծնողների Համար](#):

Ծնողներ՝ և Խնամակալներ՝, իմանալու համար ավելին, թե ինչպես նվազեցնել ձեր վարակման վտանգը և դանդաղեցնել COVID-19-ի տարածումը, ներառյալ՝ որ իրավիճակներն են ավելի վտանգավոր, այցելեք ph.lacounty.gov/reducerrisk:

Պատվաստվելը COVID-19-ից պաշտպանվելու լավագույն միջոցն է:

Պատվաստումները անվճար են և հասանելի են 5 տարեկան և բարձր տարիքի բոլոր անձանց համար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Պատվաստումները լայնորեն հասանելի են Լոս Անջելեսի Շրջանում՝ առանց նախօրոք ժամադրման: Տեսե՛ք պատվաստումները հասանելի են այն մարդկանց համար, որոնք ի վիճակի չեն դուրս գալ տնից:

Այցելե՛ք՝ VaccinateLACounty.com և սեղմեք <<[ինչպես Պատվաստվել](#)>>՝ ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար, կամ գանգահարեք **Հանրային Առողջապահության Վարչության Պատվաստումների Չանգերի Կենտրոն**

833-540-0473 հեռախոսահամարով, որը գործում է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը: